ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«30» 01 2023թ.
№ ԿԳԵՄԲ-12ԷԼ

«ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի (04214892)
տնօրեն Կ. Գրիգորյանին
հասցե՝ ՀՀ .ք. Երևան, Նար-Դոս 75
հեռ. 010 57 10 75

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի միջև 29.06.2022թ. կնքված N ՀՄԱԱՊՁԲ-22-7/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և այդ պայմանագրին կից 03.08.2022թ. կնքված N 1 համաձայնագրի շրջանակներում «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ն մինչև 2022թ. սեպտեմբերի 16-ը պետք է մատակարարեր 80000 կգ Շարժիչի յուղեր/ 15W40/, սակայն «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում մատակարարված 33880 կգ ապրանքը չի ընդունվել՝ տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունվարի 27-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 33880 կգ ապրանքի մասով:

Տեղեկացնում եմ, որ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2446136 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, 2280000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն և ՀՀ պետական բյուջեի 900005028106 գանձապետական հաշվեհամարին ենթակա է փոխհատուցման 25500 ՀՀ դրամ՝ յուղի հետազոտությունների և փորձարկումների համար իրականացված ծախսերի դիմաց՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածի ծանոթության 6-րդ կետի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ ձեռնարկում է միջոցներ՝ «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների գանձման ուղղությամբ, որոնք համապատասխանաբար կազմում են 15 200 000 ՀՀ դրամ և 19 311 600 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ